ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 59

«06» 07 2018 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N 50 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու և առանձին գործառույթների իրականացման համաչափ վերաբաշխում ապահովելու անհրաժեշտությունից ելնելով՝ տեղեկատվական տեխնոլոգիաների սպասարկման և անվտանգության ապահովման վարչության առաջին կարգի մասնագետի հաստիքներից երկուսը կրճատելու և նույն վարչության գլխավոր մասնագետի երկու նոր հաստիք սահմանելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 10-րդ կետերով, 30-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի հունիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների հաստիքացուցակը հաստատելու և Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի ղեկավարի 2018 թվականի ապրիլի 5-ի N 21 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 50 հրամանով հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին բաժնի 3-րդ գլխի 24-րդ կետի «վարչության գլխավոր մասնագետ 2» բառերը փոխարինել «վարչության գլխավոր մասնագետ 4» բառերով.

2) 1-ին բաժնի 3-րդ գլխի 26-րդ կետի «վարչության առաջին կարգի մասնագետ 4» բառերը փոխարինել «վարչության առաջին կարգի մասնագետ 2» բառերով:

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարի վրա:

3. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին և Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա. ԴԱՎԹՅԱՆ